

## ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՂԹԱՆԸ

Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոսը այսօր Սուրբ Գրիգոր Լուսավորչի Մայր Տաճարին մէջ իր հայրապետական պատգամը պիտի ուղղէ հայ ժողովուրդին եւ անդրադառնալ Արցախի խնդիրին: Հոյժի Ֆրանչիսկոս պապը եւս կող ուղղեց դարձեցնել ռազմական գործողութիւնները Արցախի մէջ եւ չվտանգել քաղաքայիններուն կեանքը:

### Խմբագրական

## ՓԱՌՔԻ ՇԱՄՏ, ՀԱՅՐԵՆԻՔ

Հայաստանի երրորդ հանրապետութեան ծննդեան տարեթիւը ինքնաբերաբար մեզ կը մղէ շարք մը մտորումներու: Հայոց պատմութեան ընդհանուր համայնապատկերէն դիտած, հայրենի հողին վրայ հայկական պետականութեան վերականգնումը ապահովեց հայութեան գոյատեւման իրատուը: Դարերէ ի վեր, գրեթէ երազ դարձած պատրանք մը, ի վերջոյ դարձաւ շօշափելի իրականութիւն, որ ի հարկէ հայութեան համար արժած էր նահատակներու փաղանգներ, անտեղիտալի բռնութիւններ, անհաւասար գուպարներ, անչափելի զոհողութիւններ: Յաջորդական սերունդներու նուիրակական կտակն էր, որ կեանքի կոչուեցաւ 1918-ի սրտի չափ փոքրիկ տարածքի մը վրայ: Փիւնիկն էր որ յառնած էր մոխիրներու ընդմէջէն: Փիւնիկէն ետք՝ արժին էր որ պիտի ստատուէր հայրենի երկինքին վրայ՝ որովհետեւ պիտի կայանար ան, մաքառէր ու տոկար՝ հակառակ թշնամեաց նեղ ցանկութեան:

Երբ հանրապետութիւններու օղակում շրջային վերջին հանգրուանն էր երրորդ հանրապետութիւնը, որուն 32-րդ ամեակն է այսօր. անկախութեան եւ ինքնիշխանութեան բուականը արդարեւ, որ ինքնին նոր էջ մը կը բանար մեր ժամանակակից պատմութեան մէջ:

Այսօր, վերյուշ մը իսկ բաւարար է ընդմշարելու, որ ինչպիսի՞ փոքրիկայոյզ իրադարձութիւններու ակնհաստեան եղանք անցնող տարիներուն: Տարբեր մակարդակներու վրայ եւ տարբեր հանգամանքներու բերումով հայրենի պետականութիւնն ու ժողովուրդը դիմակալեցին բռն լեւեռներու փորձանաւոր եւ վտանգալից փուլերը: Խոչընդոտ իտութիւնն եղան անպակաս՝ ինչ մը բոլոր կողմերէն յայտնուող: Բացարձակ խաղաղութեան պահերը եղան ցանցառաղէպ եւ անորոշուելու մթնոլորտը՝ հազուադէպ: Բազմակողմանի ճակատներու վրայ երրորդ հանրապետութիւնը ունեցաւ ցնցումներ, ինչպէս նաեւ՝ ընկերային-քաղաքական-նազմական-տնտեսական եւ հոգեբանական ալեկոծումներ: Իրապաշտութիւնը կը պարտաւորեցնէ խոստովանելու, որ ինքնակայացման խարխալումներուն ակունքները կը գտնուին յատկապէս մեր մէջ եւ հետեւաբար ամեն ձախողութեան տոհմ չորոններ արտաքին գործոցները սուկ: Ժամանակն է ըլլալու իրատես, առարկայական եւ ճշմարտասէն՝ որպէսզի սրափօրէն գնահատենք այն ինչ որ ունինք: Արժեւորենք այն ինչ որ ձեռք բերած է ի գին անմահողորմ նուիրատութեան:

Երրորդ հանրապետութեան փայլուն օրերը չեն այսօր: Անկախութեան շեփորակարները կորսնցուցած են իրենց նախկին թափը: Բայց, բոլոր պարագաներու տակ ոչ որի արտօնումն է եղերամայր ըլլալու եւ կամ յուսահատութեան պատմութեանը զգեցած՝ ողբասացութիւններ յանկերգելու:

Ընդհակառակը: Մեծի Տանն Երեւանի 21-ի այս առաւօտ, հայրենատիրութեան եւ անկախ պետականութեան գաղափարականով լիցքաւորուելու պահն է որ պիտի ըմբռնենք ազգովին: Եթէ կատարեալ ու փայլուն չէ ամեն ինչ, այս պիտի չհշտանակէ մնալ ձեռնածալ ու համոզուած: Եւ ի՞նչ է պետականաշինութեան եւ անկախութեան նախապայմանը, եթէ ոչ համազգային մասնակցութիւն հայրենիքի կերտումի ծանրաձանր աշխատանքին: Իրաքանջիւրը իր կարողութեամբ եւ հմարտութեամբ ի հարկէ: Աշխատանք, որ ոչ կարիքն ունի հրաւիրել եւ ոչ հրահանգի: Այլ՝ նուազագոյն գիտակցութեան եւ յանձնառութեան պարզապէս:

Հակառակ բացասական ու ճնշիչ տուեալներու, անկախութեան տօնի այս փուլին, յանուն անհամար նահատակներու եւ ի խնդիր վարդապետ պայծառ ազգաբազին, հայրենիքի առկայութիւնը, անոր փառքն ու բանակը, ժրջան եւ հողին կառչած ժողովուրդը կը միտքարեւն բոլորս: Մեր ունեցածին տէրն ըլլալու իրամայակամը առաջնահերթ է այսօր, զայն գորգորալուն ու խնամելը էական պարտաւորութիւն: Երազային կարգախօսները արդէն հնամաշ են դարձած ու ճապարհած: Ամեն ինչ թանձր գոյններով մրտելու ոչնչապաշտութիւնը աւելի քան կործանարար է այս փուլին: Կը մնայ ամոքել վերքերը, համալրել ուժերը, համախմբել կենսունակ ու լաւատես տարրերը եւ ընթանալ լիիրաւ անկախութեան ճանապարհով:

Հայրենի հողը առանց պետականութեան՝ ենթակայ է կորուստեան: Նոյնպէս, պետականութիւնը առանց հողի՝ դատապարտուած է չքացման: Իսկ այս երկուքը պահողն ու պահպանողը բնականաբար ժողովուրդն է իր բանակով ու մտաւորականութեամբ, բանուորական ուժով թէ գիւղացիութեամբ, կրթական համակարգով ու մշակոյթով, տնտեսութեամբ եւ հոգեմտաւոր արժեքներով: Այսօր տօնն է այս բոլոր մասնիկներուն, որոնք ջանադիր ու հետեւողական, ամենօրեայ ճիգ ու ջանքով ոտքի կը պահեն Հայաստանի երրորդ հանրապետութիւնը: Անոնք է, որ հաւատարիմ նախնիներէն հրիսակում ժառանգութեան, անկախութեան հուրը վառ կը պահեն ի հեճուկս նոսրութեան եւ բազում դասալիքներու: Այս յատկանշական օրուն առիթով, յատկապէս պարտաւոր ենք խոնարհիլ հայոց բանակի նահատակ գիտորդներու յիշատակին առջեւ, որոնք տարբեր ճակատներու վրայ անմահացան՝ յանուն հայրենիքի անվտանգութեան: Իրենց արեանք ոռոգեցին հայրենի հողը եւ կործարեցին պաշտպանեցին անկախութեան գաղափարականը: Անոնց անունները, մէկ առ մէկ, մաս կազմեցին մեր նորագոյն պատմութեան էջերուն: Փառք հերոսներու անմար յիշատակին:

Հայաստանի երրորդ հանրապետութեան ծննդեան օրուն այս արշալոյսին, մեր սիրտի խորքէն եւ լիահագագ կը գոչենք՝ ՓԱՌՔԻ ՇԱՄՏ, ՀԱՅՐԵՆԻՔ:

## ԱՆԿԱՏՈՒԹԻՒՆ ԱՌԱՂՑ ԱՐՑԱԽԻ

Այսօր՝ 21 Սեպտեմբերին գուցէ կը գրանցուի Հայաստանի Հանրապետութեան անկախութեան տօնի 32 նշումներուն տխրագոյնը՝ ի տես Արցախի մէջ անցնող երեք



օրերուն տեղի ունեցած վտանգաւոր զարգացումներուն: Ժիշը է, որ երեկ կեսօրին ռուսական միջնորդութեամբ եւ ատրպէյճանական Նախապայմաններով գիտադարար յայտարարուեցաւ Արցախի մէջ, այնուամենայնիւ որոշակի խախտումներ շարունակուեցան մինչեւ գիշեր: Ըստ տեղի բնակչութեան եւ լրագրողներուն, գիտադարարները տեղ թշնամին շարունակած է որոշ հարուածներ ուղղել մայրաքաղաքին եւ մօտակայ շրջաններուն: Երեկ առաւօտեան, Ռուսիոյ պաշտպանութեան Նախարարութիւնը յայտարարած էր, թէ խաղաղապահներուն միջնորդութեամբ հայկական եւ ատրպէյճանական կողմերը համաձայնած են լիակատար դադարեցնել կրակոցները եւ անցնիլ բանակցութեան: Արցախի պաշտպանութեան բանակը հա-



ղորդագրութեամբ մը յայտարարեց, թէ հակառակորդին նպատակը եղած է Արցախը մասնատել եւ անդամալի վնաս պատճառել անոր կենսունակութեան: «Երկու օր տեսած յամառ մարտերուն ընթացքին Արցախի զինուած ուժերը հերոսաբար պաշտպանուած են իրենց քանի մը անգամ գերադասող թշնամին: Դժբախտաբար կորուստներ ունի նաեւ արցախեան կողմը եւ որոշ շրջաններու մէջ թշնամին մխրճուած է Պաշտպանութեան բանակի մար-

### ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Այսօր կը նշենք Հայաստանի 3-րդ Հանրապետութեան անկախութեան 32-րդ տարեդարձը եւ գայն կը դիմաւորենք ծանրակշիռ պայմաններու մէջ: Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը միշտ եղած է հայրենիքի կողքին, եղած է հայրենիքի ինքնիշխանութեան, անկախութեան ու բարգաւաճման ջատագովը, հայրենիքը դասելով ամեն ինչէ վեր:

Այս ծանրագոյն օրերուն մեր պարտականութիւնն է ամեն գնով սատար կանգնիլ հայրենիքի պետականութեան, ինքնիշխանութեան, տարածքային ամբողջականութեան, ինչպէս նաեւ Լեռնային Ղարաբաղի մեր հայրենակիցներուն անվտանգ եւ ապահով ապրելու իրաւունքին՝ իրենց պատմական հողին վրայ:

Քաջ կը գիտակցիք, որ Հայաստանի Հանրապետութիւնը հայ ժողովուրդի միակ երաշխիքն է: Եւ ուրեմն ընդմիշտ ու մանաւանդ ներկայիս գրաւականն է աշխարհասփիռ հայերով միասնական կեցուածք որդեգրել՝ մեր յաւերժական հայրենիքի յառաջիկայ մարտահրաւերները դիմագրաւելու, յանուն ազատ, անկախ եւ ինքնիշխան Հայաստանի:

Ս. Գ. ՀՆԳՎԱԿԵԱՆ ԿՈՄՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ ԵՐԱՆՆԻ ՎԱՐԻՉ ՄԱՐՄԻՆ

տական դիրքեր, տիրանալ որոշ դիրքերու եւ ռազմավարական բարձունքներու», ուստի որոշում առնուած է համաձայնիլ գիտադարարի ռուսական առաջարկին, որ կ'ենթարէ Արցախի պաշտպանութեան բանակի կազմալուծում եւ Պաքուի ու Ստեփանակերտի միջեւ բանակցութիւններ: Ըստ համաձայնութեան, տակաւին Արցախ գտնուող Հայաստանի զինուորները պետք է անյապաղ դուրս գան եւ յանձնուին ծանր զէնքերը:



Չինադարարէն առաջ, թշնամին փորձած էր յառաջանալ Ասկերանի եւ Մարտունիի ուղղութեամբ, որ անհաւասար մարտեր մղեցին Արցախի պաշտպանութեան բանակի զինուորները: Իսկ Արցախի Հանրապետութեան Նախագահ Սամուէլ Շահրամանեան զինադարարէն ժամելու առաջ նշած էր, որ Արցախը պարտադրուած պիտի ըլլայ դիմել համապատասխան քայլերու, առանց բացայայտելու զանոնց մանրամասնութիւնները:

(Շար.ը տեսնել 4րդ էջ)

## ԴԻՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽՈՒԺՈՒԹԵԱՆ ՓՈՐՉ

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեան ուղերձով մը խօսեցաւ Արցախի զարգացումներուն եւ գիտադարարի որոշումին մասին: Նշելով, թէ Երեւան մասնակից չէ դարձած քննարկումներուն, Փաշինեան հաւաստիացուց, թէ 2021-ի Օգոստոսէն ի վեր Արցախի մէջ չկան Հայաստանի զինուորական զորքեր:



տանի զինուած ուժեր: «Եթէ խաղաղապահները կատարած են գիտադարարի առաջարկը, այդ կը նշանակէ, որ անոնք այլեւս առանց վերապահումներու ընդունած են Արցախի հայութեան անվտանգութեան ապահովումի ամբողջական պարտականութիւնը, որպէսզի լիարժէք պայմաններ ստեղծուին՝ Արցախի ժողովուրդին իրաւունքը պահպանելու համար», ըսաւ Փաշինեան: Հայաստանի վարչապետը նաեւ նկատել տուաւ, որ Հայաստանի հետ կապ չունեցող յայտարարութեան մէջ Հայաստանի անունը յիշատակելը կ'ապացուցէ այն վարկածը, որ Արցախի

դէմ յարձակումին նպատակներէն մէկը Հայաստանը ներքաշելն է ռազմական գործողութիւններուն մէջ: «Անոր խորքային թիրախը պետք է ըլլար Հայաստանի անկախութիւնն ու ինքնիշխանութիւնը», շեշտեց Փաշինեան:

Հայաստանի Անվտանգութեան խորհուրդի քարտուղար Արմեն Գրիգորեան իր կարգին յայտարարեց, թէ Հայաստան կը շարունակէ պաշտպանել միայն իր գերիշխան տարածքը, զայն համարելով Երեւանի առաջնահերթութիւնը: Գրիգորեան նաեւ մեկեւաբանեց ռուս բարձ-



րաստիճան պաշտօնատարներէն Տմիթի Մետվետելի Հայաստանի նկատմամբ սպառնական ոճով յայտարարութիւնները: «Եթէ Մետվետելու այդպիսի վարքագիծ կը դրսեւորէ, թող Մոսկուան մտածէ այդ մասին», յայտնեց Գրիգորեան եւ յատկացուց, թէ Ռուսիան չի որոշեր, թէ ով կ'ըլլայ Հայաստանի իշխանութիւնը:

(Շար.ը տեսնել 2րդ էջ)



# ՄՈՍԿՈՒԱՅԵՆ ԴԺԳՈՂՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՄԲԱՏԱՆՈՒԹԻՒՆ

Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութին ակնկալեց, որ Արցախի հակամարտութեան լուծումը կարելի կ'ըլլայ տեղափոխել խաղաղ հուն: Չինաստանի արտաքին գործերու նախարարին հետ ունեցած տեսակցութեան ընթացքին Փութին նշեց, թէ իրենք մնայուն կապի մէջ են Ռուսաստանի, Արցախի եւ Ատրպէյճանի ղեկավարներուն հետ:



Ան նաեւ պնդեց, որ ռուս խաղաղապահները կարելի կը կատարեն քաղաքայինները պաշտպանելու համար: Փութին երկէ գիշեր հեռաձայնով խօսեցաւ Փաշինեանի հետ ու քննարկեց Արցախի մէջ ռուս խաղաղապահներու հետազայ առաքելութեան մանրամասնութիւնները: Նախագահի բանբեր Տմիթրի Փետրով մինչ այդ նշեց, թէ Ռուսաստան միշտ եղած է ու պիտի մնայ Ռուսիոյ շատ կարեւոր գործընկերը եւ մերձաւոր դաշնակիցը: Ան սակայն կարծիք յայտնեց, որ բախումները տեղի ունեցած են Ատրպէյճանին ենթակայ հողի վրայ, յիշեցնելով, թէ Երեւան ճանչցած է Ատրպէյճանի տարածքային ամբողջականութիւնը: Ան կը մեկնաբանէր Ռուսաստանի Անվտանգութեան խորհուրդի քարտուղար Արմեն Գրիգորեանին, որ Մոսկուան ամբաստանած էր Արցախը պաշտպանելու իր պարտաւորութիւնները չկատարելու մէջ:

Ռուսիոյ դաշնութեան խորհուրդի փոխնախագահ Կոնստանտին Զովաչով շեշտեց, թէ Արցախի իրավիճակը արագ հանդարտած էր շնորհիւ Ռուսիոյ նախագահի ջանքերուն: «Ռուս խաղաղապահներուն առաքելութիւնը շատ



յաշող էր հակամարտութեան գոտիին մէջ: Անոնց միջոցաւ Երեւանի, Ստեփանակերտի եւ Պաքոյի իշխանութիւններուն հետ երկխօսութեան շնորհիւ հնարաւոր եղաւ յայտարարել զինադադար: Միաժամանակ, ռուս խաղաղապահները կազմակերպեցին տուժածներուն բժշկական օգնութեան տրամադրումը եւ վտանգաւոր շրջաններէն Արցախի խաղաղ բնակչութեան տարահանումը», ըսաւ Զովաչով: Ան սակայն կոչ ուղղեց չակնկալել, որ ռուս զինուորները իրենց խաղաղապահ առաքելութեան շեղելով այդ գործողութիւններ պիտի իրականացնեն: Ռուս պատասխանատուն ահագանգեց, թէ Արցախի հարցով եռակողմանի համաձայնութիւններէն շեղիլը յղի է բռնութեան նոր բռնկումներով:

Ռուս պաշտօնատարները նաեւ շարունակեցին Ռուսաստանի իշխանութեան քննադատութիւնը: Ռուսիոյ անվտանգութեան խորհուրդի փոխնախագահ Տմիթրի Մետվոտեի օգնականը պարզաբանեց օր մը առաջ նախկին նախա-



գահին կատարած յայտարարութիւնը, նշելով, թէ «հայ ժողովուրդի բոլոր ազգային դաւաճանները իրենց անդրծովեան հովանաւորներուն հետ պիտի ուղարկուին դժոխք»: Իսկ ռուս ծերակուտական Ալեքսանտր Պաշին նշեց, որ «Փաշինեանի դիրքորոշումը չի նպաստեր ռուս-հայկական յարաբերութիւններուն»:

# ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՁԵՒԱԿԱՆ ՄՏԱՀՈԳՈՒԹԻՒՆ

ՄԱԿի Ապահովութեան խորհուրդը այսօր սկզբունքով պիտի գումարէ արտակարգ կիստ մը՝ քննարկելու համար Արցախի մէջ անցնող երեք օրերուն գրանցուած իրադարձութիւնները: Իսկ ՄԱԿի մարդկային իրաւունքներու խոր-



հուրը Ռուսաստանին ու Ատրպէյճանին խաղաղութեան հողովոյթին վերադառնալու կոչ ուղղեց: Նախօրէին, Ռուսաստանի Յանրապետութեան յատուկ յանձնարարութիւններով դեսպան Էտմոն Մարութեան համաձայնեցի գրառումներով բռնութեան քննադատեց միջազգային ընտանիքին անգործութիւնը: Ան X (Նախապէս՝ Twitter) կիրարոյթին վրայ իրապարակեց տեսագրութիւն մը, որուն մէջ կ'երեւին Արցախի Իվանեանի օդակայանին մէջ տեղակայուած ռուս խաղաղապահներուն մօտ ապաստանելու փութացող իրենց գիւղերէն տեղահանուած բազմաթիւ արցախցիներ եւ մեկնաբանեց. «Ատրպէյճանի ծրագրած է կազմակերպած ցեղային զտումն է: Այս կը հանդուրժէ միջազգային հանրութիւնը: Այս կը հանդուրժէ դուք՝ Պայտըն, Պլինքըն, Մաքրոն, Միշել, Պորել»:

Նշենք, որ Արցախի տեղեկատուական գրասենեակը քաղաքայիններուն յորդորած էր ինքնուրոյն չուղղուիլ ռուս խաղաղապահներու կեդրոնատեղի, այլ մնալ ապաստաններուն մէջ՝ խուսափելու համար հաւանական վտանգներէն:



Միացեալ Նահանգներու արտաքին գործերու նախարար Անթոնի Պլինքըն Ռուսաստանի վարչապետ Նիկոլ Փա-

# ԲՈՂՈՔԻ ՇԱՐԺՈՒՄ ԵՐԵՒԱՆԻ ՄԵՋ

Երեւանի մէջ երկէ շարունակուեցան Արցախի հարցով կառավարութեան գործունէութիւնը քննադատող եւ վարչապետ Նիկոլ Փաշինեանի հեռացումը պակասնշող շարժումները: Ընդդիմադիր ուժեր առաւօտեան ժամերէն սկսեալ յայտարարեցին դասադուլ եւ գործադուլ, իսկ երեկոյեան



հանրահաւաք տեղի ունեցաւ կեդրոնական Յանրապետութեան իրապարակին վրայ: Ցուցարարներէն ոմանք ալ գետին նստան՝ հանգուցալուծելու համար երթեւեկութիւնը: Նախանցեալ օր Երեւանի կեդրոնական Յանրապետութեան իրապարակին վրայ տեղի ունեցած ցոյցերուն ընկերակցած խնդիրներուն հետեանքով ձերբակալուած է չորս ցուցարար՝ Սահմանադրական կարգը տապալելու մասին կոչեր արձակելու կամ զէնք կրելու կասկածներով: Նշենք, որ նախանցեալ օրուան բախումներուն հետեանքով վիրաւորուեցան 16 ստիկաններ եւ 18 քաղաքայիններ: Կառավարական համալիրին առջեւ տեղի ունեցաւ ցոյցի զուգահեռ, վարչապետին զօրակցողներ եւ այլ քաղաքայիններ ուղղուեցան Ռուսիոյ դեսպանատուն եւ շրջապատեցին շէնքը: Անոնք պահանջեցին, որ Մոսկուա միջոցներու ձեռնարկէ՝ Արցախի մէջ յառաջացած իրավիճակը կարգաւորելու համար:

չինեանի յայտնեց, թէ Ռուսիոյ կողմէն կ'աջակցի Ռուսաստանի ինքնիշխանութեան, անկախութեան եւ տարածքային ամբողջականութեան: Ամերիկացի քննարկականներու խումբ մըն ալ յայտարարութեամբ դատապարտեց Պաքոյի արարքները, շեշտելով, թէ ատրպէյճանցիները մահաբեր ուժ կը գործածեն Ստեփանակերտի բնակելի շրջաններուն դէմ: Զոնկրեսականները նախագահ Ծօ Պայտընէն պահանջեցին դադրեցնել ամերիկեան օգնութիւնը Ալիեւի



համակարգին: Ամերիկահայերն ալ փակեցին Լոս Անճելէսի ճամբաներէն մէկը՝ ուշադրութիւն սեւեռելու Արցախի վրայ: Նման նստացուց մըն ալ կայացաւ Նիւ Եորքի մէջ, ՄԱԿի կեդրոնատեղիին առջեւ:

Իսկ Գանատայի արտաքին գործերու նախարար Մեկալի Ճոլի խիստ անհանգստութիւն յայտնեց տեղի ունե-



ցածի մարդասիրական հետեանքներուն գծով եւ երկու կողմերուն առաջարկեց անյապարկ վերջ տալ ռազմական գործողութիւններուն:

(Շար.ը տեսնել 3րդ էջ)

# ԴԻՒԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՆԽՈՒԺՈՒԹԵԱՆ ՓՈՐՁ

(Շարունակուած Ա. Էջէն)

Ռուսաստանի արտաքին գործերու նախարար Արարատ Միրզոյեան Նիւ Եորքի մէջ Եւրոմիութեան արտաքին եւ անվտանգութեան քաղաքականութեան գերագոյն յանձ-



նակատար ժողովի Պորելին ներկայացուց Արցախի տրագոյն զարգացումներն ու ատրպէյճանական բռնութիւնները, կեդրոնականով քաղաքայիններու շարքերէն ինկած զոհերու եւ վիրաւորներու տուեալներուն վրայ: Ան ահագանգեց, թէ Պաքոյի գործողութիւնները կը բացայայտեն ցեղային զտումներ կատարելու մտադրութիւնը:

Միրզոյեան նաեւ գործնական քայլեր պահանջեց ԵԱՀԿ գործող նախագահ Պոլյար Օսմանիէն եւ Իտալիոյ արտաքին գործերու նախարարէն:

Ռուսաստանի արտաքին գործերու նախարարի տեղակալ Պարոյր Յովհաննիսեան, Ռոյթըրզ լրատու գործակա-



լութեան տուած զրոյցին մէջ շեշտեց, որ Արցախի հայերը միայն տեսակետէն կրնան ապրիլ Ատրպէյճանի իշխանութեան տակ, սակայն պատմական փորձը ենթադրել կու տայ, թէ այդ կարելի չէ պատկերացնել:



# ԲՈՒՌՆՑՔՈՒՆԵՐ ՆԱՅԵՐ



Թույլ ու նախատինք, զառանցանք, ատելություն, արհամարհանք, ապագան քարկոծելու ու աւարտելու պաթոսային բռնկումներ, կրակը իւրով օծելու դառնադի յղումներ, սեփական անձը քարկոծելու անէծքաբանություն, միմեանց հասցեին թունաւոր արտանետումներ, ինքնամերժում, ամպագոռոռ նախատություններ, որ գրում են յարմարաւետ բազմոցների վրայ: Իրօ՞ք չենք նկատում, չենք հասկանում, որ նպատակաւոր իրարանցում են առաջացնում, որ իւրաքանչիւր հարթակ նետի խելքին փչանո ու էլ անելի խորանայ քառսը, խելագարությունն ու մահը, դաժանությունը: Սթափությունը տեղ չի գրադեցնում մեր էջերում, հագուստը եւ գրառումները միանակաւորութեան կոչերի: Մեղաւորներ փնտռելու փոխարեն մի բան յտակ է՝ պատերազմ, որ հայը տեսել է իր ծննդեան օրից: Համախմբման կոչեր ինչեցնենք, հին ու նոր չխառնենք, եթէ դժբախտութիւն էր «անցաւորների» Հայաստանում յայտնուելը, ապա դա միթէ՞ չեն նկատել այնքան խելացի ու կարեւոր մարդիկ, որ չարիքն իրենց ձեռքով Հայաստան են բերել ու ապականել կեանքը, ում «Աստուծոյ ժողովուրդ» են ասում: Ներկան կախուած է անցեալի փէջերից, ում մերժում են: Ներկան ամօթալի ու խայտառակ չէ, ներկան մարմնաւորում է թշնամու կերպն ու նրա հեռահար նպատակները: Դադարենք իրար միտ ծամել, քարկոծել, թունաւորել իրար,


մեր կեանքն ու բախտն անիծել, նոր ահասարտու ներկայացումների սցենարներ յղանալ, երբ անզէն ձեռքերով կանգնած ենք մահուան դիմաց: Դադարենք նուաւտացնել ինքներս մեզ, դադարենք կործանել, առանց այն էլ Աստուծոյ հետ մեն-մենակ մնացած մեր ժողովրդի ներքին մերկութիւնն ի ցոյց դնելով: Մեզ ի՞նչ եղաւ: Թէթէ-սովիկութեան բաց դրսեւորումներով ո՞ւմ ենք զարմացնելու: Զկայ աշխարհի վրայ ապահով անկիւն: Ոչ-ոք ողբի այսպիսի դրսեւորումներ չի ունենում: Արժանապատիւ լուրջութիւն պահենք՝ մտածելու ժամանակ շատ կ'ունենանք: Կորուստներն ու մահերը սարսափելի են, էլ անելի սարսափելի է ատելութիւնը, որ մեր մէջ է: Ողբով ու իրարանցումներով հարցեր չենք լուծի: Մենք չգիտենք ինչ է պահել Աստուած մեզ համար եւ ինչու: Բաց ենք թողել պահը կարեւոր, թոյլ ենք տուել, որ անողջախոհութիւնը յաղթանակի մեր մէջ: Ոչ Նիկոլ, ոչ Սերժ, ոչ Զոհարեան: Հիմա հուաքուելու պահ է, էլ ժամանակ չկայ: Մեր պետականութիւնը թանկ է՝ ազնուագոյն...

«Հայեր, բաւ է ցրուած մնաց մատներիս պէս, Բռնացքուելն է յաւերժութիւնն Հայաստանի...»

ԼԵՆԱ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ  
Քիւրական  
20.09.2023 թ.

## ԱՏՐՊԷՅՃԱՆԱԿԱՆ ՅԱՐՉԱԿԱՄԱՆ ՇԵՏԵԱՆԵՐՈՎ ՎԻՐԱԿՈՐՈՒԹՅՈՒՆ ԴԱԴԻՎԱՆՔԻ ՆԱԽԿԻՆ ՎԱՆԱԶԱՅՐԸ

Դադիվանքի նախկին վանահայր Տէր Յովհաննէս քահանայ Յովհաննիստեանը, որ 44-օրեայ պատերազմէն յետոյ ծառայութիւնը կ'անցընէ Մարտակերտի Յակոբա-



վանքին մէջ, 19 Սեպտեմբերին վիրաւորում ստացած է Լեռնային Ղարաբաղի մէջ՝ ատրպէյճանական յարձակման հետեւանքով:  
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տեղեկատուական բաժնէն յայտնեցին, որ ան ներկայիս Արցախի հիւանդանոցներէն մեկուն մէջ է:  
«Տէր Յովհաննէս քահանան վիրահատուած է: Վիրահատած են անոր փայծաղը: Անոր առողջական վիճակը հիմա կայուն է», նշեցին Մայր Աթոռէն:  
Վիրահատութիւնը տեղի ունեցած է Ստեփանակերտի հիւանդանոցին մէջ:

## ԵԱԿԿ ԳՈՐԾՈՂ ՆԱԽԱԳԱՎՔԸ ԿՐԿՆԱԾ Է ԻՐ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՎԱՄՈՒԹԻՒՆԸ՝ ԱՆԽՈՒԺՕՐԷՆ ՆԵՐԳՐԱՎՈՒՄԵԼՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ԱՏՐՊԷՅՃԱՆԻ ՄԻՋԵՒ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՕԺՇՆԱԳԱՅԵԼՈՒՄ

ԵԱԿԿ գործող նախագահ, Հիւսիսային Մակեդոնիոյ արտաքին գործերու նախարար Պոլյար Օսմանի ՄԱԿ-ի Գլխաւոր վեհաժողովի շրջանակներուն մէջ առանձին հանդիպումներ ունեցած է Հայաստանի արտաքին գործերու նախարար Արարատ Միրզոյեանի եւ Ատրպէյճանի



արտաքին գործերու նախարար Ծէյիուն Պալյար մ ո Վ ի հետ: Այս մասին յայտարարութիւն տարածած է ԵԱԿԿ նախագահութիւնը:  
«Նախագահ Օսմանի իր խոր մտահոգութիւնը յայտնած է տարածաշրջանին մէջ տեղի ունեցած ռազմական գործողութիւններուն եւ այն վտանգին արնչութեամբ, որ անոնք կը ներկայացնեն տուժած քաղաքացիական բնակչութեան համար: Անյայաղ ապա մագլցողութեան կոչ ընելով՝ ան կրկին բարձրաձայնած է իր մտահոգութիւնները հակամարտութենէն տուժած բնակչութեան, յատկապէս՝ խոցելի խումբերուն վրայ ծանր հետեւանքներու վերաբերեալ: Ան ընդգծած է, որ մարդասիրական նկատառումները պէտք է գերակայեն, եւ որ տեղի բնակչութեան մարդասիրական կարիքները պէտք է բաւարարուին: Շեշտած է, որ վեճերը լուծելու համար ուժի կիրառումը լիովին եւ միշտ անընդունելի է, եւ որ կայուն, կառուցողական երկխօսութիւնը՝ բարի կամքի ռզիմով, կայուն խաղաղութեան միակ ճանապարհն է», նշուած է յայտարարութեան մէջ:  
Պոլյար Օսմանի կրկնած է իր պատրաստակամութիւնը՝ աշխուժօրէն ներգրաւուելու Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ խաղաղութեան օժանդակելուն: Ան շեշտած է, որ ԵԱԿԿ-ը ունի համապատասխան փորձ եւ գործիքներ՝ «նպաստելու երկխօսութեան, կառուցելու վստահութիւն եւ իրագործելու համապատասխան համաձայնութիւնները, որոնք կ'աջակցին կողմերուն միջեւ յարաբերութիւններու կարգաւորման»:

**BOGHOS OPTIC**  
Autoroute Jdeideh,  
Tel.: 01-870016

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՉԵՒԱԿԱՆ ՄՏԱՀՈԳՈՒԹԻՒՆ

(Շարունակուած Բ. Էջէն)

«Երոմիութիւնը չափազանց մտահոգ է Արցախի իրավիճակի վատթարացումին կապակցութեամբ»: Այսպէս յայտարարեց Երեւանի մէջ Երոմիութեան դեսպան Վասիլիս Մարակոսը՝ Հայաստանի արդարադատութեան նա-



խարար Գրիգոր Միլաստեանի հետ երէկ ունեցած տեսակցութեան ընթացքին: Նախարարը իր կարգին յոյս յայտնեց, որ Երոմիութիւնն ու անոր անդամ պետութիւնները համարժէք գնահատական կու տան Ատրպէյճանի գործողութիւններուն եւ խստագոյն կը դատապարտեն զանոնք:

Ֆրանսայի նախագահ Էմանուէլ Մաքրոն շեշտեց, թէ Արցախի դէմ յարձակումը պէտք է դադրի, անելցնելով, թէ սերտ կապի մէջ կը մնայ վարչապետ Փաշինեանի հետ:

Գերմանիոյ խորհրդարանի արտաքին գործերու յանձնաժողովի նախագահ Սիլյայել Ռոթ շեշտեց, թէ Երոմիութիւնը պէտք է արագ եւ վճռական գործէ՝ Հայաստանի դէմ հուանական յարձակումը կանխելու համար: Ան չբացառեց Պերլինի ու Պաքոյի միջեւ տնտեսական յարաբերութիւններու վերատեսութեան ենթարկումը՝ որպէս հակադարձութիւն Արցախի մէջ Ատրպէյճանի գործած բռնութիւններուն: Իսկ Եւրոպական խորհրդարանի պաշտպանութեան ենթայանձնաժողովի ղեկավար, Ֆրանսացի երեսփոխան Նաթալի Լուազօ ցաւ յայտնեց, որ Եւրոպական դիւանագիտութիւնը չկրցաւ արդիւնաւետօրէն արձագանգել Արցախի շուրջ ստեղծուած իրավիճակին եւ կանխել ատրպէյճանական բռնութիւնները, թէեւ անոնք նախապատրաստութիւն կը կատարուէր Եւրոպացիներուն աչքին առջեւ: Ան բողոքեց, որ Երոմիութեան արտաքին եւ անվտանգութեան քաղաքականութեան գերագոյն յանձնակատար Ժոզէֆ Գորթեմէն Է Հայաստանի օգտութեան դիմումը եւ խաղաղութեան Եւրոպական հիմնադրամին՝ Հայաստանին օգնելու առաջարկը, պատճառաւանդելով, թէ անհրաժեշտ է պատրաստուիլ խաղաղութեան, ոչ թէ պատերազմի: «Եւրոպական խորհրդարանը բազմիցս զգուշացուցած էր Արցախի հարցով, սակայն դիւանագիտութիւնը անտեսեց այդ նախազգուշացումները», ըսաւ Լուազօ եւ շեշտեց, թէ օրը հասած է պատժամիջոցներ սահմանել Ատրպէյճանի ղեկավարներուն նկատմամբ, որոնք Եւրոպայի անգործութիւնը կանաչ լոյս կը համարեն իրենց համար: «Անգործութիւնը մեզի բոլոր դիմողներուն ազդանշան կու տայ, որ չեն կրնար յոյս դնել մեր վրայ», ըսաւ Լուազօ:

Եւրոպայի խորհուրդի մարդկային իրաւունքներու յանձնակատար Տուսիա Միատովիչ դատապարտեց Արցախի



մէջ ռազմական մագլցումը ու շեշտեց, թէ քաղաքացիներուն անվտանգութիւնը կարելի է ապահովել միայն ռազմական գործողութիւններու դադրեցումէն ետք:

Իրանի պաշտպանութեան նախարար Մոհամմադ Ահմադ Աշթիանի իր ռուս պաշտօնակից Սերկէյ Շոյկուի հետ ընկարկեց տարածաշրջանի զարգացումները, ապա հաստատեց, որ կովկասեան երկիրներու տարածքային ամբողջականութեան պահպանումը կարմիր գիծ է Թեհրանի համար:

ՆԱԹՕ-ի ընդհանուր քարտուղարի քաղաքական եւ անվտանգութեան հարցերով օգնականի տեղակալ եւ Կովկասի հարցերով յատուկ ներկայացուցիչ Խաւիէր Զոլմի-Նա յայտարարեց, թէ իրենք ուշադիր կը հետեւին Արցախի զարգացումներուն եւ կը պահանջեն, որ գինադարին հետեւին խաղաղութեան բանակցութիւններ:

Ֆրանսախօս երկիրներու միջազգային կազմակերպութեան ընդհանուր քարտուղարը խստօրէն դատապարտեց Արցախի դէմ ատրպէյճանական բռնութիւնները եւ շեշտեց զինադադարը յարգելու կարեւորութիւնը, ցաւակցելով զոհերու հարազատներուն:

Միջազգային քրեական դատարանի նախկին ընդհանուր դատախազ Լուիս Մորէնօ Օքամփօ յայտարարութեամբ մը ցեղասպանութիւն որակեց Իլիամ Ալիեւի իշխանութեան կատարածը Արցախի մէջ եւ կոչ ուղղեց թոյլ չտալ, որ Հայոց Նոր ցեղասպանութիւնը դառնայ Ուըրանիոյ պատերազմի կողմակի հետեւանքը: Յաւ յայտնելով, որ միջազգային ընտանիքը ցարդ հանդուրժած է Ալիեւի ցեղասպան գործողութիւնները, Օքամփօ շեշտեց, թէ «ժամանակն է արթնալու: Եւրոպական երկիրները կրնան նախագահներ Պալտընին եւ Փութինին օգնել՝ կանգնեցնելու 2023 թունականի Հայոց ցեղասպանութիւնը»:



## «ԼՂ-ի մեջ ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՉԵՆ ԱԶԴԱԾ ՀԱՅ-ԱՄԵՐԻԿԵԱՆ ԶՕՐԱՎԱՐԺՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑԻ ՎՐԱՅ»

### ԸՍԱԾ Է ԱՄՆ ՊԱՇՏՈՆԵԱՆ

ԱՄՆ զինուորները հայկական զորքերուն հետ համատեղ զորավարժությունները անարտադրելի են 20 Սեպտեմբերին, ինչպես էլ ի սկզբանե նախատեսված էր, Լեռնային Ղարաբաղի մեջ Ատրպեյճանի ծախսած ռազմական գործողությունները չեն ազդած անոր ընթացքին վրայ: Այս մասին «Ռոյթերզ»-ին յայտնած է ԱՄՆ զինուած ուժերու ներկայացուցիչներն մեկը:



Անոր խօսքով՝ «Արծիւ Գործընկեր-2023» տասնօրեայ զորավարժություններու ժամանակացույցին մեջ փոփոխություններ չեն եղած:

«Մենք տեղեակ էինք, որ անոնք (խմբ.՝ Ատրպեյճանը) գործողություններ կ'իրականացնեն, բայց չհամարեցինք, որ այդ պահին անոնք որեւէ վտանգ կը ներկայացնեն մեր զինուորներուն համար, ետեւաբար, անոնք մնացին մինչեւ զորավարժութեան ավարտը», յայտնած է ԱՄՆ զինուած ուժերու ներկայացուցիչը:

## ԱՆԿԱՆՈՒԹԻՒՆ ԱՌԱՂՑ ԱՐՑԱԽԻ

(Շարունակած Ա. Էջէն)

Արցախի նախագահի նախկին խորհրդական Արտակ Բեգլարեան յայտնեց, թէ միօրեայ յարձակումներուն ընթացքին Ատրպեյճան վերահսկողութեան տակ առած է ռազմավարական բարձունքներ, ճամբաներ եւ քանի մը համայնք: Ան ահագանգեց, թէ Արցախի ժողովուրդը կանգնած է շարդերու առող վտանգի տակ: Իսկ Արցախի մարդկային իրաւունքներու պաշտպանը երէկ գիշեր ուշեց, թէ զոհերուն թիւը անելի քան երկու հարիւր է, իսկ վիրաւորները՝ անելի քան չորս հարիւր: Չինադադարէն ժամեր անց թշնամին կրակ բացաւ Հայաստանի արեւելեան սահմանային Սոթք շրջանի մարտական դիրքերուն ուղղութեամբ: Արցախի մեջ նաեւ հրաձգութեան ելթարկուեցան ռուս զինուորները, կորսնցնելով հինգ զինուոր:

Իսկ գիշերուայ ուշ ժամերուն հաղորդուեցաւ, թէ զինադադարը տակաւին չէ հաստատուած Շուշիի շրջանի հայկական տիրապետութեան տակ մնացած Մեծ Շեն եւ Հին Շեն գիւղերուն մէջ: Մեծ Շենի գիւղապետը յայտարարեց, թէ իրենք պաշարուած են եւ փախուստի ելք չունին, մինչ մտակայ եղցահողը թշնամին գետնին հաւասարեցուցած է, մինչ բնակչութիւնը կրցած է դուրս գալ յարձակումէն առաջ:

Ատրպեյճանի նախագահ Իլհամ Ալիեւ կէս գիշերին յայտարարեց, թէ անցնող երկու օրերու Հայաստանի դիրքորոշումները փոխուած են եւ ցոյց կու տան, ու կարելի է մտնիկ ապագային ստորագրել խաղաղութեան պայմանագիր: «Իսկ անոնք որոնք մեզ կ'արհամարհեն, մեր հողին վրայ աչք ունին եւ մեր յաջողութիւնները չեն մարսեր, ապա երբեք պէտք չէ մոռնան, որ երկաթէ բռունցքը իր տեղն է», յիշորոտաց Ալիեւ: Իսկ Թուրքիոյ նախագահ Ռեճեփ Թայիպ Էրտողան ամբողջական զօրակցութիւն յայտնեց իր պաշտօնակիցին:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱՆԱԶԸ ԻՐԱՆԻ ԳՈՐԾՆԿԵՐՆԵՐՈՒՆ ՆԵՐԿԱՅՅՈՒՅՑՎԵԼ Է ԼԵՌՆԱՅԻՆ ԴԱՐԱՔԱՂԻ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ԳԷՄ ԱՏՐՊԵՅՃԱՆԻ ԿՈՂՄԷ ԱՄՆԶԱԶԵՐԾՈՒՄԸ ՅԱՐՁԱԿՄԱՆ ՀԵՏԵՎՆՔՆԵՐԸ

Հայաստանի հանրապետութեան գլխաւոր դատախազ Աննա Վարդապետեանը ընդունած է Իրանի Իսլամական Հանրապետութեան արդարադատութեան փոխնախարար Աքբար Ճալալիանի գլխաւորած պատուիրակութիւնը: Հանդիպման մասնակցած է նաեւ Հայաստանի մէջ Իրանի արտակարգ եւ լիազօր դեսպան Մեհտի Սոպիանին:

Նախքան օրակարգային հարցերուն անդրադառնալով՝ Աննա Վարդապետեան իրանցի գործընկերներուն տեղեկացուցած է 19 Սեպտեմբերի առաւօտեան Լեռնային Ղարաբաղի ժողովուրդին դէմ Ատրպեյճանի կողմէ սանձազերծուած լայնածաւալ յարձակման մասին՝ ընդգծելով, որ Ատրպեյճանը կը շարունակէ իր հայատեաց եւ ցեղասպան քաղաքականութիւնը:

Գլխաւոր դատախազը ընդգծած է, որ Ատրպեյճանական զինուած ուժերուն կողմէ թիրախաւորուած են քաղաքացիական բնակչութիւնը եւ ենթակառուցուածքները, առկայ են զոհեր եւ վիրաւորներ, այդ շարքին՝ կանայք եւ երեխաներ:

Այս ծիրին մէջ, ՀՀ գլխաւոր դատախազը կարեւորած է Հայաստանի եւ Իրանի բազմադարեայ բարեկամութիւնը՝ ընդգծելով, որ տարածաշրջանային անվտանգութեան ապահովման առումով հայ-իրանեան յարաբերութիւնները կ'ամրապնդուին:

Իրանի արդարադատութեան նախարարին տեղակալը

շնած է, որ Իրանը մտահոգուած է ստեղծուած իրավիճակով եւ ընդգծած է, որ Իրանի ջանքերը ուղղուած են տարածաշրջանին մէջ խաղաղութեան ապահովման ու ամրապնդման:



Հանդիպման ընթացքին անդրադարձ կատարուած է օրակարգային շարք մը հարցերու:

Պատուիրակութիւնը Հայաստան ժամանած է հայ-իրանեան իրաւական հարցերով կոմիտէի անդրանիկ նիստին մասնակցելու նպատակով:



### Հ.Կ.Բ.Մ. ԴԱՐՄԱՆԱՏՈՒՆ

### ԸՆԿ. ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ԿԵԴՐՈՆ

01/560704  
71/356035

---

**ՀԿԲՄի դարմանատունը արդէն պատրաստ է ձեզ ընդունելու ԺԱՄԱԴՐՈՒԹԵԱՄԲ:**

Այսու կը ներկայացնենք ՀԿԲՄ-ի Նոր Հաճնոյ դարմանատան մասնագետ բժիշկներու անուանացանկը եւ ժամանակացոյցը:

<b>Բժշ. Աքրամ Չղեյա -</b>	Ակնաբոյժ	(Երեքշաբթի)
<b>Բժշ. Իրինա Արբաճեան-</b>	Ծննդաբերութեան եւ կանանց հիւանդութիւններու մասնագետ	(Երեքշաբթի)
<b>Բժշ. Ռաֆֆի Ժիլակոբեան -</b>	Քիթ, կոկորդ եւ ականջի մասնագետ	(Չորեքշաբթի)
<b>Բժշ. Յարութ Տեմիրճեան -</b>	Ոսկրաբոյժ	(Չորեքշաբթի)
<b>Բժշ. Ռաֆֆի Փօլատեան -</b>	Գեղձային հիւանդութիւններու մասնագետ	(Երեքշաբթի)
<b>Բժշ. Յարութ Այնթապեան -</b>	Ընդհանուր բժիշկ	(Չորեքշաբթի)
<b>Սարին Չափութեան -</b>	Սննդաբան	(Ուրբաթ)
<b>Բժշ. Ժամալ Հատտատ -</b>	Ատամաբոյժ	(Երկուշաբթի եւ Ուրբաթ)
<b>Բժշ. Միսակ Ալեքսանեան -</b>	Սրտաբան	(Ուրբաթ)
<b>Բժշ. Ծովինար Ալեքսանեան -</b>	Մաշկաբան	(Ուրբաթ)
<b>Բժշ. Վարութ Մարկոսեան -</b>	Մանկաբոյժ	(Երկուշաբթի)
<b>Բժշ. Միսակ Արբաճեան -</b>	Վիրաբոյժ	(Հինգշաբթի)

Դարմանատունը բաց է ամէն օր առաւօտեան ժամը 9:00-էն մինչեւ կէսօրէ ետք ժամը 3:00, բացի Շաբաթ եւ Կիրակի օրերէն:

Ձեր ուշադրութեան կը յանձնենք, թէ դեղարանը բաց է նաեւ նոյն ժամերուն:

### ՀԱՃՆՈՅ ՇԵՐՈՍԱՄԱՐՏԻ 103-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ

### ՄԱՏԱՂԻ ԱՐԱՆԴԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

Հաճնոյ հերոսամարտի նահատակներուն նուիրուած անկողական մատաղի պատրաստութիւնը տեղի պիտի ունենայ Շաբաթ, 7 Յոկտեմբեր 2023-ին:

Հետեւաբար, կոչ կ'ուղղենք բոլոր հայրենակիցներուն եւ բարեկամներուն, որ իրենց մատաղցու ոչխարը կամ նուիրատուութիւնները փոխանցեն Հաճնոյ Հայրենակցական Միութեան գրասենեակ, Սք. Գեորգ եկեղեցոյ խորհրդատուն եւ կամ շրջող հանգանակիչներուն:

**ՀԱՃՆՈՅ ՀԱՅՐԵՆԱԿԱՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ**



### ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Գալուստ Կիւլբենկեան Հիմնադրութեան Հայկական Համայնքներու Բաժանմունքի տնօրէն Իոկու Ռազմիկ Փանոսեանի հետ:

Ճամբանայ գործունէութեան գերօրէն բաժանմունքի նոր ռազմավարութեան կրթանի ծրարները:

Ուրբաթ 22 սեպտեմբեր 2023, Երեկոյեան ժամը 8:00-ին, Ազգային Փիւնիկ սրահին մէջ, Շաղկոյեան կեդրոն, Պուրճ Համուտ:

### ՆՈՐ ՄԵՐՈՒՆԿ ՄԵԼԿՈՒԹԵՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ

### ԱՐԵԳ ԴԱՐՄԱՆՈՒՄ

Ուրախութեամբ կը տեղեկացնենք, թէ 2023-2024 տարեշրջանի, «ԱՐԵԳ» պարախուճի արձանագրութիւնները սկսած են: Ծաբաթ օրերը կէսօրուան ժամը 12:00-էն մինչեւ ժամը 2:00, ՀՄՄ ակումբ:

Մանրամասնութեան համար Հեռաձայնել 03/984462 Թիւին:

**Մոսաբ'ո՛ր եւ Փայլո՛ր ԱՐԵԳ-ո՛ւ:**



### Sahaguian College

- Clear and shared focus
- Supportive learning environment
- Frequent monitoring of learning and teaching
- Individual growth and academic success

---



**2023-2024 Tuitions**

Grades 8 & 9	→ 200 \$	<b>Grade 7 FREE</b>
Grades 10 & 11	→ 250 \$	
Grade 12	→ 300 \$	

+961 3 280 743 | Sahaguian-Levon Meguerditchian College | Sin el Fil



[www.araraddaily.com](http://www.araraddaily.com)

### ARARAD DAILY NEWSPAPER

MANAGING DIRECTOR: ANI SARAFIAN

Tel.-Fax: 01-565599 | P.O.Box: 175275 Mar Mikhael Beirut | Lebanon | www.araraddaily.com email: araradoratert@gmail.com

ارارات جريدة سياسية يومية أرمينية | المحبرة المسؤولة: أني صرافيان (م.م.ش.)